# Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ քաղաք Երևան, Ա. Դ. Սախարովի անվան թիվ 69 դպրոց

Առարկա՝ Քիմիա

Թեմա՝ Խնամքի միջոցների ուսումնասիրումը

Վերապատրաստող՝ Նարինե Կուրեղյան

Ուսուցչուհի՝ Մարինե Պապոյան

# Թեմայի ընտրությունը

- Մենք ընտրեցինք այս թեման, քանի որ քիմիան ուղղակիորեն մտնում է ներկայիս խնամքի միջոցների բաղադրության մեջ: Եվ մենք ուզում էինք ուսումնասիրել թե ինչ բաղադրություն ունեն տարբեր խնամքի միջոցներ. Եվ թե արդյոք մենք  կարող ենք ինքներս ստեղծել խնամքի միջոցներ և կիրառել:

# Արդիականությունը

- Հետազոտության թեման համարվում է արդիական , քանի որ խնամքի միջոցներն օգտագործում են նորածնից մինչև մեծ տարիքի անձինք:

# Հիմնախնդիրները

- Այժմ կան շատ տարբեր արտադրատեսակների խնամքի միջոցներ և մեզ հետաքրքիր էր դրանց բաղադրությունը: Եվ մեր հիմնական հիմնախնդիրը եղել է անվտանգ նյութերի միջոցով նոր խնամքի միջոցների պատրաստումը:

# Նպատակը

- Ստանալ օգտակար բաղադրատոմսեր դեմքի մաշկի խնամքի համար:

# Մեր նպատակին հասնելու ճանապարհը

- Ուսումնասիրեցինք տարբեր սկրաբների բաղադրատոմսեր
- Ուսումնասիրեցինք տարբեր նյութերի հատկությունները, հատկապես ազդեցությունը դեմքի մաշկի վրա
- Կազմեցինք թեստ, որի միջոցով կարելի է պարզել դեմքի մաշկի տեսակը
- Ստեղծեցինք նոր բաղադրատոմս տարբեր մաշկի խնդիրների համար
- Կիրառեցինք տարբեր դեռահասների ու մեծահասակների դեմքերի վրա, ունեցանք հրաշալի արդյունք:

# Մաշկի տեսակը որոշող թեստ

- 1. Նկատել եք արդյոք ավելորդ փայլ դեմքի վրա:
- 2.Լուսանկարներում ձեր դեմքը փայլուն է երևում:
- 3.Առանց դիմափոշի երանգակրեմ օգտագործելուց երկու կամ երեք ժամ հետո դիմահարդարումը ինչ տեսք կունենա:
- 4’. Նայեք մեծացնող հայելու մեջ: Քանի մեծացած ծակոտի ունեք:
- 5. Ձեր դեմքի մաշկը դուք կբնորոշեք որպես չոր, նորմալ, կոմբինացված թե յուղոտ:
- 6.Ունենում եք արդյոք փակված ծակոտիներ սև կամ սպիտակ գլխիկներով:
- 7.Խոնավեցնող միջոցներ օգտագործելուց 2-3 ժամ հետո ձեր մաշկը ինչ տեսք է ունենում……

# ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## Մեր պատրաստած խնամքի միջոցներից ներկայացնենք երկու բաղադրատոմս

ԴԵՄՔԻ ԲՈՒԺԻՉ ՍԿՐԱԲ ԽՈՆԱՎԵՑՆՈՂ ԿՐԵՄ

- Կաոլին 30գ
- Օսլա-15գ
- Լեվոմիցետին-2գ
- Երիցուկ

ԴԵՄՔԻ

- Վազելին -1թ/գ
- Ցինկի մազ-2թ/գ

# ԿԱՈԼԻՆ

- Կաոլինը ազատում է խնդրահարույց մաշկը վիզուալ խնդիրներից: Հագեցնում է մաշկը վիտամիններով և միներալներով: Կավը խորը մաքրում է դեմքի, գլխի մաշկը, հարթեցնում է մանր կնճիռները: Կաոլին կավը չի կարելի օգտագործել շատ հաճախակի, քանի որ այն կարող է չափից շատ չորացնել մաշկը: Կավը համապատասխանում է մաշկի բոլոր տիպերին, հատկապես յուղոտ, կոմբինացված,ակնեի հակում ունեցող, ցուցված է նաև վեգաններին:

# ՕՍԼԱ

Օսլան դա սպիտակ, ջրում չլուծվող փոշի է: Օսլան բույսերի կանաչ բջիջների կողմից ածխածնի օքսիդի յուրացման արդյունքն է: Տարածված է բուսական և կենդանական աշխարհում: Օսլան վերականգնում է մաշկի երանգն ու ամրությունը,կարգավորում է բջիջներում օքսիդատիվ պրոցեսները, խթանում է երիտասարդացման գործընթացը, նորմալացնում է ճարպերի աշխատանքը, օգնում է մաքրել մաշկը ածխաջրերով:

# ԼԵՎՈՄԻՑԵՏԻՆ

Այս դեղը լայն սպեկտրի հակաբիոտիկ է: Այն հիմնականում օգտագործում են լուծի բուժման համար: Բայց շատ հաճախ կոսմետոլոգները դրանցից պատրաստում են տեղական ազդեցության հատուկ դիմակներ: Նման դիմակները լյարդի պաթոլոգիական փոփոխություններ չեն առաջացնում:Այն կարելի է օգտագործել ցանկացած տարիքում:

# ԵՐԻՑՈՒԿ

“

Դաշտային երիցուկը ամենաարդյունավետ և մատչելի կոսմետիկ միջոցն է, որը կարող է օգտագործվել դենքի և մարմնի մաշկի խնամքի համար:Այն ունի ախտահանիչ, խոնավեցնող, երիտասարդացնող և վերականգնող ազդեցություն: Երիցուկը ՝ 1. ապահովում է մաշկի հուսալի պաշտպանությունն ուլտրամանուշակագույն ճառագայթների բացասական հետևանքներից, 2. մաքրում է վերին մաշկը, ծակոտիները նեղացնում, 3. ունի մանրէասպան հատկություն, 4. մաշկի պիգմենտացիան հասցնում է նվազագույնի.....

# ՎԱԶԵԼԻՆ

Վազելինը թանկարժեք քսուքներից ավելի լավն է իր բարձր մոլեկուլային զանգվածի շնորհիվ, որը մաշկի վրա անթափանց թաղանթ է ստեղծում: Այն կանխում է կնճիռների առաջացումը, մաշկը պահում է խոնավ: Այն նաև օգնում է մաքրել դիմահարդարումը, պաշտպանում է ճաքճքված շուրթերը: Յուղը վազելինի հիմնական բաղադրիչն է, այն լավ կարգավորում է մաշկի մակերեսի պեպտիդները:

# ՑԻՆԿԻ ՄԱԶ

Արտաքին կիրառման համար նախատեսված ցինկի քսուքը լավագույն հակաբորբոքային միջոցներից է, որն օժտված է կոմպլեքսային ազդեցությամբ:

Այն կարելի է օգտագործել պզուկների առաջացումը կանխելու համար:

# Մեր պատրաստած սկրաբի և խոնավեցնող կրեմի օգտագործումից

ԱՌԱՋ



ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԵՏՈ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Մեր հետազոտությունից պարզեցինք, որ առաջադրված վարկածը հաստատվեց և մենք կարողացանք ստանալ այնպեսզի օգտակար բաղադրատոմսեր, որոնց միջոցով կարելի է բուժել տարբեր խնդրահարույց մաշկեր:
-
- **ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**